ԿԱԼԻՖՈՌՆԻԱՅԻ ՀԱՅԵՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 1920-1930-ԱԿԱՆՆԵՐԻ ՃԳՆԱԺԱՄԸ

ՀԱՍՄԻԿ ԵՍԱՅԱՆ

Ամերիկայի Միացյալ Նահանգներ ներգաղթողների, այդ թվում նաև հայերի ներգրավվելը երկրի տնտեսական ու սոցիալական կառուցվածքներում պայմանավորված էր ամերիկյան հասարակության պահանջներով ու զարգացման միտումներով: Հայ ներգաղթողների արագ և պարտադիր անցումով արդիական, անընդհատ զարգացող ամերիկյան հասարակություն վերափոխվեցին ամերիկահայության կենսագործունեության, կենսակերպի բնութագրերը:

XIX դ. վերջին Միացյալ Նահանգների արևելյան շրջաններ եկած հայերը չունեին մասնագիտական բավարար հմտություններ, հիմնականում չէին տիրապետում անգլերենին, ուստի ստիպված էին տարիներով աշխատել տարբեր ձեռնարկություններում իբրև բանվորներ: «….Հայ գործաւորը, - գրում էր ժամանակակիցը, - անծանօթ տեղական ինդուստրիայի ձևերին և միջոցներին, արհեստներին և մեքենաներին, լեզուին և սովորութիւններին և քշուելով տեղական գործաւորների գրաւած շրջաններից ու գոհանալով ամենացած օրավարձով ամենադժուար գործերով նա քշուեց երկաթի ձուլարանները, քարերի հանքերը և այնպիսի շատ ուրիշ գործատեղիներ, ուր ամենից աւելի սպառուում մարդկային կեանքը և մաշւում նրա ֆիզիքական ուժը»[1]:

Իսկ ահա երկրի արևմտյան շրջաններում ազատ հողատարածքների յուրացումը ընձեռում էր նոր հնարավորություններ ներգաղթողների, առհասարակ ամերիկահայերի համար, ինչը վկայում է վերջիններիս սոցիալական մեծ շարժունակության մասին: Եվ բնական է, որ հայերը ձգտեցին դեպի Կալիֆոռնիա հեռավոր նահանգը՝ սեփական հող ու գործ ձեռք բերելու ակնկալիքով: Երեկվա գյուղացիների համար վերստին զբաղվել այգեգործությամբ, այն էլ մի վայրում, որտեղ արդեն ապրում էին իրենց հայրենակիցները, նախապատվելի տարբերակ էր: Ուստի պատահական չէ, որ գործունեության այդ ոլորտը դարձավ ամենահիմնականը Կալիֆոռնիայի հայերի համար: Կար ևս մեկ կարևոր հանգամանք. այդ նույն հայրենակիցներից ոմանց աննախադեպ հաջողությունը այգեգործության մեջ, ինչը կարծես իրականություն էր դարձնում

[1] **Սոկրատ խան Գելոֆեանց,** Հայ գործաւորը Ամերիկայի մէջ // **Մուշեղ Եպիսկոպոս**, Ամերիկահայ տարեցոյց, Ա տարի, Պոստոն, 1912, էջ 194-195:

«ամերիկյան երազանքը»: Սերոբյանների, Մարգարյանների, Առաքելյանների ընտանիքների օրինակը Կալիֆոռնիայի գյուղատնտեսության զարգացման գործում շատերի համար էր ոգևորիչ գործոն (պատահական չէ, որ տարբեր տարիների հրատարակվել են մի շարք հոդվածներ՝ նվիրված, օրինակ, Սերոբյանների կյանքին ու գործունեությանը[2]):

Այսպես, Սերոբյան եղբայրները չամիչի և թզի փաթեթավորված վաճառքի առաջին նախաձեռնողներն էին Կալիֆոռնիայում, եթե չասենք՝ ԱՄՆ-ում: «Սերոբյան եղբայրներ ընկերության» արտադրանքը արտահանվում էր ինչպես ԱՄՆ-ի տարբեր նահանգներ, այնպես էլ Գերմանիա, Ֆրանսիա, Հոլանդիա և Անգլիա: Այն մասնաճյուղ ուներ Չիկագոյում, փաթեթավորման գործարաններ էր հիմնել Կալիֆոռնիայի քաղաքներում: Դեռևս 1897 թ. «Ֆրեզնո Դեյլի» ("Fresno Daily Evening Expositor") տեղական ամերիկյան թերթը գրել է. «Սերոբյան եղբայրները հսկայական բիզնես են ծավալել և շուկա ստեղծել աշխարհի գրեթե բոլոր կողմերում»[3]: Հավելենք նաև, որ նրանք Ֆրեզնոյի առևտրաարդյունաբերական պալատի (Fresno Chamber of Commerce) և Կալիֆոռնիայի չամիչ արտադրողների միության (California Raisin Growers' Association) անդամներ էին[4]:

Իսկ, օրինակ, Մարգարյանների ընտանիքը զբաղված էր թուզ մշակելով: 1902 թ. Հենրի Մարգարյանին էր պատկանում 160 ակր (1 ակրը = 4046.86 քմ) հողատարածք՝ Կալիֆոռնիայում թզի տնկադաշտերի 21 տոկոսը: 1918 թ. նա ապահովել էր ԱՄՆ-ում արտադրված թզի 25 տոկոսը: Նույն տարվա հունվարին Մարգարյանը ընտրվել էր Կալիֆոռնիայի թուզ աճեցնողների միության առաջին նախագահ: Նա այնքան մեծ ճանաչում էր վայելում առևտրական շուկայում, որ դարձել էր «Ֆորքներ ֆիգ գարդենս» («Forkner Fig Gardens») թուզ արտադրող ամենախոշոր ընկերության գլխավոր խորհրդականը: Ամերիկացի մշակութային մարդաբան Վ. Դ. Վոլիսը գրում է. «Ոչ ոք այս երկրում այնքան մեծ ներդրում չի ունեցել թզի արտադրության գործում, որքան Հենրի Մարգարյանը, որի տնկած այգիները իր կենդանության օրոք ամենամեծն ու ամենահայտնին էին աշխարհում»[5]: Հենրի Մարգարյանի մահից հետո գործի գլուխ է անցնում որդին՝ Թեոդոր Մարգարյանը, որը ոչ պակաս նվիրումով տարիներ շարունակ ղեկավարում է «Մարգարյան ֆիգ գարդենս» («Markarian Fig Gardens») ընկերությունը[6]:

---

[2] Տե՛ս, օրինակ, **Guinn Professor James.** The Seropians // «The Armenian Review», 1979, № 2-122, էջ 195-196 (սկզբնաղբյուրը՝ History of the State of California and Biographical Record of the San Joaquin Valley, California, The Chapman Publishing Co., Chicago, 1905, էջ 1578-1579), **Davidian N.** The Seropians: First Armenian Settlers in Fresno County // «The Armenian Review», 1979, № 2-122, էջ 173-185, **Zenian D. Fresno:** A home away from home // «AGBU News», November 1, 1996, էջ 11-12, **Milton J. G.** The Seropians // «The Armenian Review», 1979, № 2-122, էջ 195-196:

[3] «Fresno Daily Evening Expositor», 1897, November 15, p. 3.

[4] Տե՛ս **Milton J. G.,** նշվ. աշխ., էջ 195-196:

[5] **Wallis W. D.,** Fresno Armenians (to 1919), Lawrence 1965, p. 40.

[6] Տե՛ս **Mahakian Ch.,** History of the Armenians in California. a thesis. University of Cali-

Ուշարժան է նաև Առաքելյանների ընտանիքի գործունեությունը: 1910-ական թթ. նրանք ունեին 3000 ակր հողատարածք, 1500 աշխատող[7] և ամբողջ ԱՄՆ-ում հայտնի էին «սեխի արքաներ» (կամ «ձմերուկի արքաներ») պատվանունով: «Առաքելյան եղբայներ» ընկերությունը զբաղվում էր չամիչի արտադրությամբ և գինեգործությամբ, տնօրինում էր չամիչի փաթեթավորման գործարաններ, իսկ Մադերայում գտնվող նրանց գինու գործարանը («Mission Bell») Միացյալ Նահանգներում խոշորությամբ երկրորդն էր: Գրիգոր Առաքելյանը Կալիֆոռնիայի առաջին հայ բազմամիլիոնատերն էր՝ 25 մլն դոլար կարողությամբ, և Սան Վոքին հովտում (Կենտրոնական Կալիֆոռնիա) ժամանակի ամենամեծ հողատերերից մեկը[8]:

Հայկական այս ընտանիքներից բացի՝ շատերը ևս (Վահան Աժդերյան, Կ. Հ. Հազարապետյան, Սեդրակյան եղբայրներ, Ալեք և Սթիվ Փիլիպոսներ և այլք) մեծ հեղինակություն էին այգեգործության բնագավառում: Նրանց հաջողությունները ոգևորիչ էին, ուստի Կալիֆոռնիայում հաստատվելուց հետո բազմաթիվ հայեր Ֆրեզնոյի և Թուլերիի շրջաններում սկսեցին զբաղվել այգեգործությամբ: Օրինակ՝ 1900-ական թթ. ձմերուկի և սեխի առևտուրը գրեթե ամբողջությամբ հայերի ձեռքում էր: Բացի այդ, ինչպես գրում է «Ասպարեզը», «չոր ու թաց ամէն տեսակ պտուղներու, բանջարեղէններու, հատապտուղներու (ելագ, մորմ ևն.) արտադրութեան մէջ հայերը իրենց բաժինը ունին»[9]: Այս ամենին հավելենք ծխախոտագործությունը (1910-ական թթ. սկզբին հայերի ծխախոտի տնկադաշտերը գրավում էին 300-400 ակր հողատարածք) և գինեգործությունը. «Չկայ շրջան մը երկրագունդիս վրայ, ուր հայերն ունենան այնչափ մե՛ծ ու արդիական գինեգործարաններ, որչափ Ֆրէզնոյի մէջ եւ շրջակաները… Չկայ աշխարհի մէջ շրջան մը, ուր խմիչքի վաճառքի գործը մեծ չափով հայերու ձեռքը ըլլայ, որչափ Ֆրէզնոյի մէջ»[10]: Նրանց նորամուծություններից էր բլղուրի արտադրությունը: 1930-ական թթ. սկզբին հայերն ունեին բլղուրի երեք արտադրամաս Ֆրեզնոյում, որոնց տարեկան շահույթը միջին հաշվով 175 000 դոլար էր[11]:

Պետք է ընդգծել, որ հայերի հաջող գործունեության գրավականը հողատարածքների սեփականատեր լինելն էր: Նրանք ի սկզբանե կարևորեցին այդ հանգամանքը: Նրանց զգալի մասը հողատեր էր, այլ ոչ թե վարձակալ: Օսմանյան կայսրությունում երբեմնի հաջողակ հայ առևտրականներն ու արհեստավորները Կալիֆոռնիա էին ներգաղթում մեծ գումարներով և, գալով Ֆրեզնո, իրենց ողջ ունեցվածքը ներդնում էին հողեր գնելու

---

fornia, California 1935, էջ 22-23:

[7] Տե՛ս **Terjimanian H.** Armenians in Fresno // «Hye Sharzhoom», September, 1981, № 4, էջ 8 // «Lodi News- Sentinel», Fri., Sept. 8, 1972. Excepted part of the community. Armenians contribute to culture, agriculture in Fresno // https://news.google.com/newspapers?nid=dXBh7-90p_YC&dat=19720911&printsec=frontpage&hl=en

[8] Տե՛ս «The Modesto Bee», Monday, Feb 26, 1951:

[9] «Ասպարէզ», Ֆրէզնօ, 1909, № 57, էջ 1:

[10] «Ասպարէզ, Յիսնամեակ 1908-1958», Ֆրեզնո, 1958, էջ 218:

[11] Տե՛ս **Mahakian Ch.,** նշվ. աշխ., էջ 27, 28:

կամ վարձելու մեջ՝ սրանով իսկ խիստ տարբերվելով տեղի այլազգիներից։ «Երբ տեղացիներ դեռ կը վարանէին,- գրում է «Ասպարեզը»,- հայեր չվախցան բարձր գիներ վճարել լաւ այգիներու, այնպէս որ հետզհետէ Ֆրէզնոյի բոլորտիքը ամէնէն լաւ այգիներուն մէկ մեծ մասին տէրը դարձան և չամիչի գործին կարևոր մէկ մասը հայոց ձեռքը անցաւ»[12]:

ԱՄՆ գաղթականների հարցերով զբաղվող հանձնաժողովը ուշագրավ տեղեկություններ է հաղորդում 1900-ական թթ. սկզբին Սան Վոքին հովիտ եկած մոտ երկու տասնյակ հայ հողատերերի վերաբերյալ։ Նրանք նահանգ էին ներգաղթել բավականին մեծ գումարով՝ ընդհանուր 52 150 դոլար, և իրենց ֆինանսական կարողությունների չափով գերազանցում էին նույն ժամանակ Սան Վոքինում հաստատված օտարազգի՝ դանիացի, գերմանացի և ճապոնացի հողատերերին։ Հանձնաժողովի տվյալներով՝ արդեն 1908-ին այդ հայ հողատերերի շահույթը գրեթե քառապատկվել էր՝ յուրաքանչյուրինը 11.587, իսկ միասին՝ 246 150 դոլար[13]:

Սեփական հող ձեռք բերելու մոլուցքը, սակայն, երբեմն հասնում էր ծայրահեղությունների։ Ցանկանալով ձեռք բերել տարածքի լավագույն հողերը՝ հայերը կանխիկ դրամը սպառելու դեպքում մեծ վարկեր էին վերցնում և, ի տարբերություն մյուս գաղթականների, ամենաբարձր գինն էին վճարում ակրի համար։ Տեղացիները, տեսնելով, որ նրանք պատրաստ են ցանկացած գին վճարելու, հաճախ բարձրացնում էին կանխավճարը, թեև հողի գինը մնում էր ցածր։ Այդպես հայ հողատերերի պարտքերը բանկերում աճում էին՝ 5 դոլարից հասնելով մինչև 50 000-ի[14], ինչն էլ տարիներ անց՝ տնտեսական ճգնաժամի ժամանակ, դարձավ նրանց սնանկացման գլխավոր պատճառներից մեկը։

Ինչ խոսք, քիչ չէին նաև այն ընտանիքները, որոնք Սան Վոքին էին գալիս առանց նյութական միջոցների։ Այդպիսիք ստիպված աշխատանք էին փնտրում մրգերի փաթեթավորման գործարաններում կամ խաղողի և այլ պտղատու այգիներում։ Արևմտյան Հայաստանից, Կիլիկիայից և Օսմանյան կայսրության այլ շրջաններից ներգաղթած շատ հայեր (հիմնականում կանայք) աշխատում էին հենց Սերոբյանների և Մարգարյանների այգիներում ու գործարաններում։ Իհարկե, ԱՄՆ արևելյան նահանգներից եկած վերաբնակիչները նման իրավիճակում հազվադեպ էին հայտնվում։ Նրանք, ինչպես արդեն նշել ենք, ձգտում էին լինել ոչ թե վարձու աշխատող, այլ ունենալ թեկուզև փոքր, բայց սեփական հողատարածք։

1904 թ. Սան Վոքինում հայ այգեպաններին էր պատկանում 10 000 ակր (ընդհանուր հողատարածքների 10.5 տոկոսը)[15]՝ չհաշված այն հո-

---

[12] «Ասպարէզ», Ֆրէզնօ, 1908, № 5, էջ 1:

[13] Տե՛ս **Mirak R.** Torn between two lands: Armenians in America 1890 to World War I, Cambridge (Massachusetts), 1983, էջ 114, 119:

[14] Տե՛ս «Ասպարէզ», Ֆրէզնօ, 1909, № 66, էջ 2:

[15] Տե՛ս **Mahakian Ch.,** նշվ. աշխ., էջ 24-25, **Ք. Ավագյան,** Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմությունը (սկզբնավորումից մինչև 1924 թ.), Եր., 2000, էջ 68:

ղերը, որոնք վարձակալվում էին: Տարեցտարի նրանք էապես ընդլայնում են իրենց հողատարածքները: Այսպես, 1908-ին դրանք 25 000 ակր էին, որի շուրջ 20 000-ը միայն խաղողի այգիներ էին[16]: 1919-ին, երբ Կալիֆոռնիայում խաղողի այգիները զբաղեցնում էին 250 000 ակր, հայերի սեփականությունը դրա ավելի քան 25 տոկոսն էր՝ 60 000[17]:

Որտեղ էլ որ հաստատվել են հայերը, ակնառու ներդրում են ունեցել հողագործության զարգացման գործում: Այդ առումով հատկանշական է Եդեմ կոչվող հայաբնակ ավանի օրինակը: Տեղի կավային ու ամայի հողատարածքները հայերի շնորհիվ արագորեն վերածվեցին ծաղկուն և այգեգործական կարևոր նշանակությամբ մի վայրի. «Երբեմնի անբարեբեր սեպուած և լքեալ դաշտերը այժմ ծածկուած են դեռատի այգիներով որոնց բարեբերութիւնը կը մրցի ոևէ լաւագոյն այգիներուն հետ: Գովեստի արժանի է հայուն նախաձեռնութիւնը և աշխատասիրութիւնը որ անապատը Էդեմի փոխեց»[18]: Նույնը կարելի է ասել Սան Վոքինի այլ բնակավայրերի մասին: Օրինակ՝ 1913 թ. «Ասպարեզի» համարներից մեկում Վաթոքեի մասին գրված է. «Հինգ տարի առաջ Ուաթոքէ միայն անուն մըն էր, ամայի և անբնակ դաշտ մը, ուր միայն մուկեր, նապաստակներ և շնագայլեր ազատ, համարձակ կը շրջէին, բայց այսօր հայ ժրաջան հողագործին շնորհիւ Ուաթոքէ պտղատու դրախտ մըն է»[19]: Իսկ ընդհանուր գնահատականը, ըստ Բոստոնի «Հայրենիք» ամսագրի, այսպիսին էր. «Նրանց գալուց յետոյ է, որ երկիրը սկսել է տալ ընտիր մրգեղէն: Մինչեւ նրանց գալը խաղողը եղել է թթու, թուզը փոքր, անհամ, ձմերուկը նոյնպէս: Ոչ ոք հողի յատկութիւնը այնքան ճիշտ որոշել չի կարող, որքան Հայը: Հայաստանից նա բերել է իր հմտութիւնը, փորձառութիւնը եւ ճաշակը»[20]:

Սակայն այգեգործությունը Սան Վոքինում հաճախ ընթանում էր վայրիվերումներով: Պատճառը ինչպես տնտեսության շարունակական ճգնաժամերն էին, որոնց հետևանքով բերքը չէր սպառվում, այնպես էլ եղանակային անբարենպաստ պայմանները: Այսպես, օրինակ, 1911 թ. ապրիլյան սառնամանիքը 200.000 դոլարի վնաս էր հասցրել բազմաթիվ հողագործների: Նրանք ավելի ծանր վիճակում հայտնվեցին 1916-ի հոկտեմբերին, երբ անընդմեջ տեղացող անձրևները 2 միլիոնի վնաս պատճառեցին չամիչի արտադրությամբ զբաղվողներին[21]: Հայ խաղողագործները, երբեմն նեղսրտելով այս իրավիճակներից, նամակներով, տարբեր թերթերում տված հայտարարություններով հորդորում էին արևելյան նահանգներում և Արևմտյան Հայաստանում գտնվող իրենց հայրենակիցներին չգաղթել Ֆրեզնո: «Ո՞ւր կվազէք,- գրում էին նրանք,-

[16] Տե՛ս **Mirak R.,** նշվ. աշխ., էջ 119:
[17] Տե՛ս «Կոչնակ», Նիւ Եորք, 1919, № 49, էջ 1480:
[18] «Ասպարէզ», Ֆրէզնօ, 1908, № 2, էջ 3:
[19] «Ասպարէզ», Ֆրէզնօ, 1913, № 262, էջ 4:
[20] «Հայրենիք» ամսագիր, Պոսթրն, 1924, № 3, էջ 42, 43:
[21] Տե՛ս «Կոչնակ», Նիւ Եորք, 1916, № 44, էջ 1148:

ինչո՞ւ կուգաք կախարդուածի պէս դէպի թշուառութեան ու յուսախաբութեան գիրկը… կեցէ՛ք, ուշքի եկէ՛ք – մի գաղթէ՛ք»[22]:

Դժվարությունները դիմագրավելու և գյուղատնտեսական ու առևտրային իրենց գործունեությունը կազմակերպելու նպատակով տեղացի այգեգործները հաճախ փորձել են համախմբել իրենց ուժերը տեղական առանձին միությունների ու ընկերությունների մեջ: Դրանցից էր, օրինակ՝ 1898 թ. հիմնված «Կալիֆոռնիայի չամիչ արտադրողների միությունը» (California Raisin Growers Association): Միությունը գնահատում էր խաղողը, համակարգում Սան Վոքինում խաղողի այգիների 90 %-ի արտադրանքի և դրա վաճառքի աշխատանքները: 1901 թ. այն գրանցում է մոտ 200 հայ խաղողագործների, որոնք Սան Վոքինի հայ հողատերերի մեծ մասն էին[23]: Հայ խաղողագործների թիվն այնքան է մեծանում, որ անհրաժեշտություն է առաջանում միության ղեկավար մարմնում ներկայացուցիչ ընտրելու: Եթե չամիչի ընկերությանը միանալը տեղացիների կամ այլազգի գաղթականների համար զուտ տնտեսական հարց էր, ապա հայերի համար՝ նաև տեղացիներին ներկայանալու, նրանց ուշադրությունը գրավելու ձև, քանի որ հայերը խնդիր ունեին տեղացիներին ապացուցելու, որ որպես մասնագետներ չեն զիջում վերջիններիս: Սակայն շատ հայեր ստիպված էին լինում դուրս գալ ընկերությունից իրենց հանդեպ խտրական վերաբերմունքի պատճառով: Ամեն դեպքում, չարդարացնելով իրեն, ընկերությունը դադարեց գործելուց 1904 թ.:

Նոր ընկերություն ստեղծելու բազմաթիվ փորձերը հաջողությամբ են պսակվում միայն 1912-ին, երբ հիմնվում է «Կալիֆոռնիայի չամիչ արտադրողների միացյալ ընկերություն»-ը («California Associated Raisin Company», CARC): Ընկերության մարտավարությունն այն էր, որ ազատվեր անհատ միջնորդներից, որոնք այգեպանից ցածր գնով առնում էին խաղողի բերքը և վերավաճառում ավելի թանկ[24]: Հետագա տարիներին հայ արտադրողներից շատերը եղել են ընկերության բաժնետերեր և հոգաբարձուներ, տնօրենների խորհրդի անդամներ: 1923 թ. այս ընկերությունը ահագնացող տնտեսական ճգնաժամի հետևանքով վերակազմվեց «Սան-մեյդ ռեյզին գրոուերս» («Sun-Maid Raisin Growers of California») անվամբ և մինչ օրս գործում է Քինգսբուրգում՝ իբրև չամիչ և չիր արտադրող առաջատար ընկերություն ամբողջ աշխարհում:

ԱՄՆ պատերազմական և հետպատերազմական առաջին տարիների տնտեսական վերելքին 1920 թ. ամռանը հաջորդեց տնտեսության համընդհանուր անկումը: Դրա հիմնական պատճառը արդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտներում գերարտադրության ճգնա-

---

[22] «Հայրենիք», Պոսթըն, 1913, № 25 (739), էջ 1:

[23] Տե՛ս **Mirak R.,** նշվ. աշխ., էջ 118:

[24] Տե՛ս **Kooshian G. B., Jr.,** The Armenian Immigrant Community of California: 1880–1935. A dissertation, Los Angeles, 2002, էջ 62:

ժամն էր, բանկային համակարգի փլուզումը և այլն: Արդեն 1921 թ. գարնանը գյուղատնտեսական հիմնական ապրանքների գները, 1920 թ. ամռան համեմատ, նվազեցին 2-3 անգամ: Դա իր հերթին հանգեցրեց ֆերմերային տնտեսությունների շահութաբերության խիստ անկման, և սկսվեցին զանգվածային սնանկացումն ու հարկադիր վաճառքը: 1925-1929 թթ. 547 000 ֆերմերներ սնանկացան և զրկվեցին սեփականությունից[25]: 1933 թ., նախորդ չորս տարիների համեմատ, երկրի համախառն ներքին արդյունքը նվազեց 29-30 %-ով, արժեթղթերի շուկան արժեզրկվեց 90 %-ով, գործազուրկ դարձավ երկրի բանվորական ուժի ընդհանուր թվի 24,9 %-ը[26]: Ճգնաժամը, որը տևեց մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը և հետագա տարիներին կոչվեց Մեծ ճգնաժամ (Great Depression), իսկական աղետ եղավ միլիոնավոր ամերիկացիների համար, և պատահական չէ, որ այն բազմիցս արտացոլվել է ամերիկյան գրականության մեջ, ինչպես օրինակ՝ Ջ. Ստայնբեքի «Զայրույթի ողկույզները», Թ. Վուլֆի «Դեպի տուն վերադարձ չկա» գործերում:

Բնական է, որ այս համընդհանուր ճգնաժամի զոհերից պետք է դառնային նաև ամերիկահայերը: «Մեծ ճգնաժամի հետևանքները,- գրում է Էդ. Մելքոնյանը,- հատկապես ծանր էին ցեղասպանություն և բռնագաղթ ապրած ներգաղթողների համար, որոնք նոր-նոր էին սկսել հարմարվել այդ երկրի պայմաններին: Ճգնաժամից ոչ պակաս տուժեցին նաև ավելի վաղ շրջանում ներգաղթած, տնտեսապես արդեն ինքնահաստատված հայերը»[27]:

Տարիներ տևած ճգնաժամը հիմնովին խախտեց Սան Վոքինի հայության տնտեսական կյանքը: Մեծ թվով սնանկացած հայեր չնչին գումարով վաճառում էին իրենց հողատարածքները կամ դրանք վերադարձնում կառավարությանը: 1938 թ. արտադրված 50.000 տոննա չամիչը գնորդ չունեցավ: Ֆրեզնոյում հողագործության հարցերով զբաղվող գրասենյակում հայ այգեպանները օրերով հերթ էին կանգնում այն հույսով, որ կկարողանան գրավի տակ դնել իրենց արտադրած բերքը, կալվածքը՝ փոխարենը չնչին գումար ստանալու հույսով: Ընդ որում՝ այդ գումարը իրավունք ունեին ծախսելու միայն այգեգործական նպատակներով և ոչ երբեք անձնական շահերի համար: Լոս Անջելեսում հրատարակվող «Նոր ուղի» թերթի հոդվածագիրը հետևյալ կերպ է նկարագրում հերթի մեջ կանգնող սնանկացած հայ այգեպաններին. «Հագած են հինցած, կարկատաններով շապիկ, տափատ ու բաճկոն: Թշվառությունը մարմնացած է անոնց մէջ կարծես»[28]:

Նման իրավիճակում սկսվեց բնակչության արտահոսք դեպի Կա-

---

[25] Տե՛ս "История США". В четырех томах. Том 3 (1918-1945), М., 1985, էջ 18-19, 95:

[26] Տե՛ս "Great Depression" // http://elsa.berkeley.edu/~cromer/great_depression.pdf, История США. Т. 3 (1918-1945), էջ 153:

[27] **Էդ. Մելքոնյան,** Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն, Եր., 2005, էջ 154:

[28] «Նոր ուղի», Լոս Անճելըս, 1938, № 35, էջ 3:

լիֆոռնիայի հյուսիսային ու հարավային շրջանների քաղաքներ՝ այնտեղ որևէ աշխատանք գտնելու ակնկալիքով: Երբեմնի դրախտ համարվող Սան Վոքին հովտից հայ հողագործները ևս ցրվեցին թե՛ Կալիֆոռնիայի և թե՛ մյուս նահանգների այլևայլ քաղաքներ. «… Ժողովուրդին մէջ խուճապ մը ստեղծուած է, ով որ պատեհութիւնը գտնէ ինքզինք այս շրջանակէն դուրս բազմաշատ քաղաքները կը նետէ հոն չափով մը իր կացութիւնը դարմանելու համար»[29]:

Այդ տարիներին Սան Վոքինի ճգնաժամից տուժած հայ ընտանիքները դիմում էին ամենածանր աշխատանքի ֆիզիկական գոյությունը պահելու համար: Մեծ թվով հայ կանայք երեխաների հետ մեկնում էին Հյուսիսային Կալիֆոռնիայի տարբեր շրջաններ՝ պահածոների գործարաններում աշխատելու: Այդ աշխատանքը տևում էր մոտ 6 շաբաթ, որից հետո նրանք, ինչպես և իրենց բախտակից մեքսիկացի, պորտուգալացի, իսպանացի, իտալացի կանայք, տեղափոխվում էին մեկ այլ գործարան, և այդպես շարունակ, մինչև որ աշնանը սպառվում էր բերքը: Հատկապես դժվար էր երեխաների համար, քանի որ հաճախակի տեղափոխությունները պատճառ էին դառնում դպրոցի, միջավայրի անընդհատ փոփոխության[30]:

Անդրադառնալով Արևմուտքի երկրներում բնակվող հայությանը մեծ վնասներ հասցրած ճգնաժամի հետևանքներին՝ Էդ. Մելքոնյանը գրում է. «Հենց այդ՝ կարծես անելանելի ժամանակ Սփյուռքի հայերի սոցիալական կառուցվածքում կատարվեցին իրենց հետևանքներով կարևոր փոփոխություններ: Տղամարդիկ՝ կամովին, թե ստիպված, հեռանում էին հանքերից, գործարաններից՝ շինարարական ոլորտից անցնելով ձեռնարկատիրական ոլորտ և ստանձնում էին իրենց կանանց, մայրերի, քույրերի աշխատանքը կազմակերպելու պարտավորությունը: Նրանք աստիճանաբար ձեռնարկում էին տարբեր գործեր և զարգացնում դրանք: Ահա այդ, ինչպես ասում են այսօր, ընտանեկան բիզնեսը ընդլայնելու արդյունքում դառնում էին լվացքատների, կարի և այլ արհեստանոցների, սրճարանների և ռեստորանների, խանութների սեփականատերեր: Հետագա դեպքերը ցույց տվեցին, որ դա ոչ միայն գոյատևելու առավել արդյունավետ միջոց էր այդ տարիների տնտեսական ճգնաժամի պայմաններում, այլև երեկվա գաղթականների համար ընդունող հասարակություններում միջին դասին պատկանելու գրավական»[31]:

Կալիֆոռնիայում, այնուամենայնիվ, այդ գործընթացը ուներ կարևոր մի առանձնահատկություն: Այստեղ հայերը հեռանում էին ոչ թե գործարաններից և արդյունաբերական մյուս ձեռնարկություններից,

---

[29] «Նոր օր», Պոսթըն, 1929, №19, էջ 2:

[30] Տե՛ս **Bulbulian B.,** The Fresno Armenians: History of a Diaspora Community, Fresno, 2000, էջ 63:

[31] **Э. Мелконян.** Социальные и культурные процессы в армянских общинах // **В. Дятлов, Э. Мелконян.** Армянская диаспора: очерки социокультурной типологии. Ер., 2009, с. 62-63.

այլ մեծ ու փոքր ագարակներից, հեռանում էին՝ դրանով իսկ լքելով իրենց համար այդչափ հարազատ գյուղական բնակավայրերը:

Սակայն հարկ է նշել, որ թեև 1920-ականների կեսերից շատ հայեր հեռանում էին Սան Վոքինից, նրանց մի մասը՝ նախ և առաջ խոշոր սեփականատերերը, ինչպես օրինակ՝ Թեոդոր Մարգարյանը («The Markarian Fig Gardens»), Փոլ Մովսեսյանը («Paul Mosesian Packing Company»), Ալես և Ալֆրեդ Լիոնները («The Lion Packing Company»), Չարլզ Ենոքը («The Eagle Packing Company»), Կոլիգյան եղբայրները («The Koligian Brothers Packing Company»), պահպանեցին իրենց դիրքերը և հաջողությամբ գործեցին նաև հետագայում: Խաղողի արտադրության մեջ առաջատար էին մնում հայ գործարարներ Գրիգոր Առաքելյանը, որը միաժամանակ տնօրինում էր փաթեթավորման վեց գործարանի, Արամ Սարոյանը («Fresno Grape Distributors»), Դ. Հ. Բաղդասարյանը («D. H. Bagdasarian and Sons») և ուրիշներ: Դեռ ավելին, նույն ժամանակ՝ մինչև 1925 թ., բազմաթիվ հայեր Թուրքիայից և այլ երկրներից գաղթում էին ԱՄՆ, այդ թվում՝ նաև Կալիֆոռնիա: Սրանց մեջ կային այնպիսիք, որոնք հաստատվում էին հենց Ֆրեզնոյի շրջանում կամ Սան Վոքինի այլ տարածքներում: Չէ՞ որ ճգնաժամը անհամեմատելի էր այն վիճակի հետ, որը տիրում էր Թուրքիայում: Պատահական չէ, որ նույնիսկ 1931 թ. ճգնաժամի պայմաններում Ֆրեզնոյի շրջանի խոշոր խաղողագործների մեկ քառորդը հայեր էին, որոնք տնօրինում էին խաղողի մշակմանը հատկացված հողատարածքների 40 %-ը[32]: Նրանցից էր, օրինակ՝ Սարգիս Սահաջյանը, որը շարունակեց մնալ տարածաշրջանի լավագույն այգեգործներից մեկը: Այսօր Սահաջյանի արտադրած խաղողը սպառվում է ոչ միայն ԱՄՆ-ում, այլև արտահանվում է Հարավային Ամերիկա, Եվրոպա, Ասիա, Մերձավոր Արևելք: 2013 թ. նա ճանաչվել է «Մադերայի լավագույն ֆերմեր» («Madera's Senior Farmer of the Year»)[33]:

Այսպիսով, հայերի գյուղատնտեսական գործունեության հիմնական ոլորտները եղան այգեգործական մշակաբույսերի արտադրանքն ու վաճառքը: Նրանց գործունեության առանձնահատկություններից ամենաէականը թերևս հողերի սեփականատերեր լինելն էր: Կալիֆոռնիան ԱՄՆ միակ նահանգն է, որտեղ նրանք զբաղվեցին այգեգործությամբ: Ընդ որում՝ սա տևեց ընդամենը մի քանի տասնամյակ: Ամերիկահայության պատմության մեջ դա եզակի երևույթ էր: Սակայն ճգնաժամի հետևանքով հայ այգեգործներից շատերը հեռացան՝ այդ բնագավառը թողնելով ուրիշներին: Տեղափոխվելով այլ քաղաքներ՝ նրանք հիմնական զբաղմունք դարձրեցին առևտուրը կամ արհեստագործությունը:

---

[32] Տե՛ս **Minasian Ed.,** The Armenian Immigrant Tide. From the Great War to the Great Depression // «Recent Studies in Modern Armenian History», Cambridge, Mass., 1972, էջ 110:

[33] Տե՛ս **Sarkis Sahatdjian**. Madera's senior farmer of the year // http://madera.kmph.com/ews/people/106484-sarkis-sahatdjian-maderas-senior-farmer-year

Բանալի բառեր – *Ֆրեզնո, գյուղատնտեսական գործունեություն, այգեգործություն, հողատեր, տնտեսական ճգնաժամ*

АСМИК ЕСАЯН – *Сельскохозяйственная деятельность армян Калифорнии и депрессия 1920-1930-х годов.* – Калифорнийские армяне занимались преимущественно садоводством. Работали главным образом на тысячах акров принадлежавших им земель в долине Сан-Хоакин, в их руках находилась значительная доля сельскохозяйственного производства в районе Фрезно. Калифорния была единственным штатом, где американские армяне посвятили себя садоводству, и длилось это всего несколько десятилетий. Экономическая депрессия 1920-х гг. стала судьбоносной для фермеров-армян. Многие из них, обанкротившись, были вынуждены продать свои земельные наделы или вернуть их государству и покинуть Фрезно.

Ключевые слова: *Фрезно, сельскохозяйственное производство, садоводство, землевладелец, экономическая депрессия*

HASMIK YESAYAN – *The Agricultural Activity of Armenians in California and the Depression of 1920-1930s.* – The main area of agricultural activity of the Armenians in California was the production and sale of horticultural crops. One of the most important characteristics of their activity was the fact that most of them were landowners. The Armenians owned thousands of acres in the famous San Joaquin Valley and had a large share in the income generated from the agricultural production in Fresno. California is the only state in the United States where the Armenians were engaged in horticulture. It lasted only a few decades and was a unique phenomenon in the history of Armenian-Americans. However, the economic depression which started in the 1920s was disastrous for Armenian farmers, many of them became bankrupt and had to return the lands to the State. A large number of them abandoned Fresno leaving the agricultural sector to the locals.

Key words: *Fresno, agricultural activity, horticulture, landowner, townships, economic depression*

Ներկայացվել է՝ 06.09.2019
Գրախոսվել է՝ 20.11.2019
Ընդունվել է տպագրության՝ 29.11.2019